




ՀԱՆԴԵՍ

40 ՓԱՐԱ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱՐԱ 40

ԾԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Զորեգար-
քի եւ Շաբաթ օրերն: — Տարեկան բաժանորդագրութեան գինն է
100 դրոս արծաթ: — Վեցամսեայն 50. — Գաւառնաց համար 115 դրոս.
Վեցամսեայ 60. — Ծանուցման տողը 5 դրոս:

Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել
Առ Արսոնաք եւ Տնօրէն Անտոն Սափաեան,
Էսկի Զապրիյէ ճատտուսի Նշան Էֆ. Պէրպէրեանի Տպարանն:
Խմբագրութեան յանձնուած գրութիւնք եւ չեն տուիր:

ԹԻԻ 189 Գ. ՏԱՐԻ

1889

ՅՈՒՆՎԱՐ 28 ՇԱԲԱԹ

ԶԵԿՈՅԵ

Խմբագրական ինչ ինչ նկատում-
ներով, մեր գրասենեակը փրկելու-
քէլով խանէն փոխադրած ենք էսկի
Զապրիյէ ճատտուսի Նշան Էֆ. Պէր-
պէրեանի տպարանն:

Ուստի, կը ինքերենք մեր Յարգոյ
բաժանորդներէն և ընթերցողներէն,
որ, յետ այսօրիկ, նամակ կամ որ և
իցէ գրութիւն ուղղեն,

Առ Արտոնաւոր եւ Տնօրէն Անտոն
Սափաեան Կ. Պոլիս, էսկի Զապրիյէ
ճատտուսի, Թիւ 63:



Զորեքչաքթի օր Խառն ժողովն ի
նիստ գումարեցաւ ի Խորհրդարան
Ղալաթիոյ ընդ նախագահութեամբ
Ս. Պատրիարք Հօր և Ատենապետու-
թեամբ Վսեմ Սիմոն պէյի:

Ժողովը նկատողութեան առնելով
Զմիւռնիոյ երեսփոխանական ընտրու-
թեանց առթիւ ծագած անհամաձայ-

նութիւնն և Տեղապահի հրաժարման
խնդիրը, վիճակին պատրիարքական
փոխանորդ կարգեց Այվազեան Արթ.
Յովսէփ Ծ. վարդապետն որպէս զի
Զմիւռնիա երթալով խաղաղութիւնը
վերահաստատէ, դաւառական ընդ-
հանուր ժողովին պակաս անդամոց
ընտրութիւնն ամբողջացնէ և առաջ-
նորդական ընտրութիւն կատարել
տայ:

Ժողովը Տիգրանակերտի համար
առաջնորդական ընտրելեաց հետեւ-
եալ ցանկը պատրաստեց.
Գեր, Գրիգորիս Եպիսկ. Ալէալձեան
Մամբրէ, հրաւիրակ ե-
րուսաղէմի

Արթ. Վահան վարդ. Յակոբեան
Ժողովն ուշադրութեան առաւ Ռո-
տոսթոյի առաջնորդական տեղապահ
Գեր. Հմայեակ Եպիսկոպոսի տեղեկա-
գիրն և որոշեց հրահանգ տալ որպէս
զի ամբողջացնէ տեղւոյն դաւառա-
կան ընդհանուր ժողովն, որ կազմա-
լուծեալ վիճակի մէջ էր:

Ժողովն ի նկատ առաւ Կարնոյ
Գեր. Առաջնորդին մէկ գիրն որով կը
խնդրէր Արթ. Այվազեան Եպիսկ. Յա-
կոբեան Վահան և Ոսկանեան Տաճատ
վարդապետներէ մին Կարին ղրկել իւր
վիճակին մէջ փոխ առաջնորդութեան

պաշտօնի մը կոչուելու համար: Ժողո-
վըն որոշեց գրել Ն. Գերապատուու-
թեան թէ իբրեւ առաջնորդ վիճակին
կրնայ ինք ուղղակի բանակցել այդ
վարդապետաց հետ:

Ժողովն զբաղեցաւ նաեւ յարաբե-
րական և այլ խնդիրներով:

Զորեքչաքթի օր Խառն ժողովոյ
գումարումէն առաջ Կրօնական Ժողո-
վըն ի նիստ գումարեցաւ ի Խորհրդ-
արան Ղալաթիոյ ընդ ատենապե-
տութեամբ Գեր. Խորէն Արքեպիսկո-
պոսի և զբաղեցաւ այլ և այլ անհա-
տական խնդիրներով:

Ազգ. Հիւանդանոցի Պատուարժան
Հոգաբարձութիւնը Պատրիարքարա-
նին յանձնած լինելով 1890 տարւոյ
Օրացոյցն ի վաւերացումն, Կրօնական
Ժողովն իւր անդամներէ միոյն յանձ-
նեց զայն ի քննութիւն:

Մեր ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ պատկե-
րազարդ հանգիսի առաջին և երկրորդ
թիւերն հրատարակուած լինելով կը
գտնուին մասնաւորապէս ջրավաճառ
Պօղոս և Յակոբ աղայներու խանութ-
ները:

Նշանաւոր հրապարակագիր մը, որ իր ազգային գեղեցիկ խորհրդաժողովեամբ մեծ ընդունելութիւն գտած է Մանչեսթը մէջ, այս անգամ խմբագրութեանս հրաւիրանօք, որոշած է մեր թերթին մէջ եւս յօդուածներ հրատարակել, ոյր ահաւասիկ մի նմայն:

Խասգիւղի բազմարդիւն թաղին արդի ազգային կացութեան իբր հետաքրքրուող անհատ՝ մեր ստացած տեղեկութիւնք, գոհութեամբ կը ծանուցանեմք որ, կը հաստատեն իրականացումն մեր այն մասնաւոր ջերմ փափաքանաց ու յուսոյն զոր Մանչեսթը մէջ յայտնած էինք՝ երկու շաբաթ յառաջ՝ տեսնելու զՄեծ. Եղիա էֆէնտի Շահպաղեան ի գլուխ թաղային գործոց նախ քան զտօնն Ս. Ծննդեան:

Խասգիւղցիք, որոց ի վաղուց անտի ազգային կարեւոր գործոց և ի մասնաւոր յօգուտ իրենց վարժարանին ցոյց տուած եռանդագին նախանձախնդրութիւնն ու կատարեալ արթնութիւնն օրինակելի են, թաղին պաշտօնական մարմնոց անվհատ ջանից գործակցութեամբ յաջողած են Նորին Մեծապատուութեան և իւր ազնիւ պաշտօնակցաց հրաժարականներն ետ առնուլ տալ, անշուշտ երախտապարտ մնալով միանգամայն Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հօր, որոյ յորդորանքն ու անմիջական հրաւերն, և վսեմ. Ուն. ճեան Աբիկ էֆէնտիի, որոյ թանկագին ազդեցութիւնն գլխաւորաբար պսակել տուած են իրենց սրտագին բաղձանքն:

Արդարեւ Մեծ. Եղիա էֆէնտի ուր ուրեմն տեղի տալով այնքան համակրական արտայայտութեանց՝ իւր մեծարգոյ պաշտօնակցաց հետ խթման երեկոյին անցած է ի գլուխ իւր պաշտօնին և նիւթապէս քաջալերած է եկեղեցւոյ և վարժարանին պաշտօնեայններն, որք ի բերկրութեամբ գոգցես նոր ոգի մ'առած են: Միեւնոյն ատեն բարեպաշտ ժողովուրդն լսելով յեկեղեցւոյ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր պաշտօնագրովն թէ՛ Եղիա էֆէնտի յետս կոչեր է իւր հրաժարական, փութացած է իւր շնորհակալութիւնները՝ յայտնել նմա և իւր բարեմաղթութիւններն ընել նորընտիր Թաղ. Խորհրդոյ:

Այլ սակայն տագնապն չէ անցած դեռ: Պէտք է որ Խասգիւղի փառաւոր անցելոյն համապատասխանէ և իւր ներկայն: Մեծ. Եղիա էֆէնտի Շահպաղեան ո'րչափ կարող, գործունեայ, պատրաստակամ և փորձառու լինի և իւր պաշտօնակիցք՝ պահանջելի բարեմասնութեամբ օժտեալ՝ Խասգիւղցիք միշտ պէտք ունին անշուշտ ո'չ միայն թաղեցւոց, ո'չ միայն այժմ այլուր փոխադրեալ Ներսիսեան նախկին սաներուն, այլ և համայն կրթասէր ազգայնոց հօր ձեռնտութեանն, որ պէս զի Ս. Ներսիսեան բարեհամբաւ վարժարանն որ այնքան նշանաւոր եկեղեցականներ, այնքան հոյակապ, խոհուն անձնաւորութիւններ ու անձնուէր գործիչներ յարոյց երբեմն ազգին, յարուցանէ միշտ նոյնպիսիներ յօգուտ և ի պարծանս ընդհանուր ազգին:

Խասգիւղի հողն՝ գուցէ ժամանակէ մ'ի վեր լքեալ, աւեր, այլ բնապէս անհամեմատ բերրի է և արգասաւոր: Սերմանէ անդ սուղ ինչ և պիտի հնձես առատապէս: Խասգիւղի թաղն արժանի է յաւէտ համայն ազգին հետաքրքրութեանն ու սիրոյն, զի նորա աստղն միշտ փայլած է և պիտի փայլի ազգային ամեն օգտակար ձեռնարկութեանց, ամեն ազգայէն գործոց ու խորհրդոց մէջ:

Ուրեմն, ի տես ձեր խարխուլ, կիսաւեր վարժարանին, ո' Խասգիւղցիք, նախանձախնդիր զաւակունք ձեր բարեխառակ նախնեաց, և դուք, Եղիա էֆէնտի, ժրջան մշակ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն և պանծալի սան Ս. Ներսիսեան վարժարանի, մի՛ վհատիք երբէք: այլ ամենքդ միասիրտ և միահոգի ձեռնարկեցէ՛ք վերաշինելու և վերականգնելու այն լուսափիւռ յարկն ում ազգն շատ պարտի և Դում պիտի փութայ անտարակոյս արդեամբ եւս ցոյց տալ իւր համակրութիւնն:

Ահաւասիկ թաղեցւոց կողմանէ առ Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հայրն և առ Մեծ. Եղիա էֆէնտի Շահպաղեան ուղղեալ երկու հանրագրերէն, որք ներշնչեցին մեզ վերոյգրեալ խորհրդաժողովիւններն, առ Նորին Ամենապատուութիւն մատուցեալ հանրագրոյն պատճէնը:

Սրբազան Տէր.

Մեք ստորագրեալքս, պատիւ ունիմք յայտնել Ձերդ Բարձր Սրբազնութեան թէ՛ Մեծ. Եղիա էֆէնտի Շահպաղեան, որ Խասգիւղցւոցս ըստուար քուէներովն կոչուեցաւ յատենապետութիւն նորընտիր Թաղ. Խորհրդոյ, — հրաժարական տուած է որպէս և իւր Մեծարգոյ պաշտօնակիցք:

Մեք, Խասգիւղցիքս, վայելած եմք նորա վեշտասանամեայ անընդհատ պաշտօնավարութիւնն, յորում գիւղիս Ս. եկեղեցին միշտ պայծառ և Ս. Ներսիսեան բազմարդիւն վարժարանն յոյժ նախանձելի վիճակ մ'ունէին, մինչդեռ այսօր, ցաւ է ասել, լքեալ և եղկելի կացութեան մը մատնուած են ի մեծ վնաս հարկւրաւոր երկսեռ ուսանողաց ապագային:

Հետեւաբար Մեծ. Եղիա էֆէնտի Շահպաղեանի և իւր ազնիւ պաշտօնակցաց հրաժարումն անհուն սրտաշուքութիւն պատճառած է համայն թաղեցւոցս: Թէեւ ընդ առաջնորդութեամբ գիւղիս քարողիչ Ս. Հօր՝ Թաղային Ընտրող. Ժողովն երիցս դիմած է առ Նորին Մեծապատուութիւն և մի հանրագիր եւս մատուցուած է նմա յանուն թաղին, այլ նա պնդած է իւր հրաժարականին վրայ:

Իրաց այս վիճակին մէջ կը համարձակիմք մեծաւ ակնածութեամբ հայցել Ձերդ Ամենապատուութենէն, որ բարեհաճիք հրաւիրել Մեծ. Եղիա էֆէնտի Շահպաղեան յետս առնուլ իւր հրաժարականն, որով և խորին երախտագիտութեամբ և անհուն բերկրանօք լնուլ համայն Խասգիւղցւոցս բեկեալ սրտերն, տեսնելով զինքն՝ նախ քան զտօնն Ս. Ծննդեան ի գլուխ նորընտիր Թաղ. Խորհրդոյ:

Քաջայոյս լինելով ուրեմն, Սրբազան Տէր, թէ մեր սոյն խոնարհ խընդիր պիտի արժանանայ Ձերդ հայրական խնդամիտ ընդունելութեան:

Մնամք այսու բերկրալից յուսով

Ձերումդ Բարձու Սրբազնութեան

ամենախոնարհ ծառայք

(Բազմաթիւ Ստորագրութիւնք)

Խասգիւղ

և Յունվար 1889

ԱՐՄԵՆԱԿ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԻՄ

ԴԻՄԱԿԱՌԻ ԵՒ ԱՆԴԻՄԱԿ

Ի Ն Պ Ա Ս Տ

ԱԶԳ՝ ՀԱՅՈՒՅԵԱՑ ԸՆԿ.

Ընդհանուր-ընկերություն

ՎՍԵՄ. ՅԱՐԱԹԻԻՆ ՓԱՇԱՅԻ ՏԱՏԵԱՆ

Ի ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ԲԵՐԱՅԻ

4/16 փետրուար, չաբաթ երեկոյ

ՄՈՒՏՔ ՄԵԿ ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԱՐԳԱԴԻՐ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

- Յ. Էֆէնտի Նորատունկեան Արեւապետ
- Գ. » Ծամտանճեան Արեւապետ
- Ն. » Ներսէսեան Գանձապետ
- Ասպետ Ա. Խ. Զունդ
- Լ. պէյ Փափաղեան
- Տ. Էֆէնտի Եւսուփեան
- Ն. » Փափաղեան
- Ն. » Վէքիլ
- Պ. » Պէրպէրեան

ԱՆԴԱՄՔ ԹԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

Տ Ի Կ Ն Ա Ց Ք

- Ապրո Ողանի
- Երկանեան Վարդուհի
- Էսաեան Վերդինէ
- Թաշճեան Ներսիս
- Խնճեան Պէտրիս
- Հալաճեան Թագուհի
- Մամիկոնեան Տիրուհի
- Նեվրուզ Երանուհի
- Նորատունկեան Մաքրուհի
- Ներսէսեան Նարթիկ
- Ծամտանճեան Պէտրիս
- Պիլլուեան Մարիամ
- Զունդ Ն. Ոսպետուհի
- Տափուտեան Մաննիկ
- Տափուտեան Տ. Տիրուհի
- Փորթուքալ Քարօլին
- Սըվաճեան Սօֆի
- Օրիորդ Խոնչէկիլ Նոյմի
- » Միւհէնտիսեան Մարի

Տ Ե Ա Ր Ք

Աղաքեկեան Սարգիս Էֆէնտի
 Եֆէնտի Տիմիթրաքի »
 Էսաեան Յովհաննէս »
 Իզզէթ պէյ Նախ. Արեւ. Ա. Դաւաթեան
 Իպրահիմ պէյ Արեւ. Ար. Գործոց
 Նախարարութեան
 Տեար Լիւմուան Լ. Տնօրէն Քրէտի Լիւմե
 Պաշտպան
 » Լէվի Ռօպէռ
 Խուճարեան Կարապետ Էֆ. Սիւրբ
 Էֆ. Կարապետեան
 Հալաճեան Բարսեղ Էֆէնտի
 Ղալիպ պէյ Տնօրէն Դաւաթեան Տնօրէն
 Արապէս Էֆ. Նախարարութեան
 Մաքսուտ Սիմոն պէյ
 Մազհար » Նախ. Բախտի
 Մամիկոնեան Միքայէլ Էֆ. Տնօրէն օր
 Միւհէն. Սպար. Դրան
 Նաուա Էֆ. Ընդ. Բար. Արապ. Գործոց
 Նախարարութեան
 Նուրեան Էֆ. Արեւ. Պաշ. Խոնչէկիլ
 Նեվրուզ Արթուրի խան Ա. Մարտի
 Պաշտպան Դաւաթեան
 Ունճեան Արիկ Էֆ.
 Զայեան Իլիան » Օր. Խոնչէկիլ
 Արապէս Էֆ. Նախարարութեան
 Տեար Պաշ. Է.
 Սամանճի Գէորգ Էֆ.
 Տափուտեան Տիրան պէյ Դեր Տնօրէն
 Հիւսպար. Դիւան
 Փորթուքալ Միքայէլ Էֆ. Տնօրէն
 Երկրագործական Պաշտպան
 Բուլուճեան Պետրոս Էֆ. Տնօրէն
 Ուսարար և Հանգ
 Օտեան Խաչիկ Էֆ. Տնօրէն Կարապետեան
 Սեփէ Ար. Գործոց Նախ.

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

... խմբագիր.

Հաճեցէք, ներկայս հիւրընկալել
 Ձեր պատուական թերթին մէկ ան-
 կիւնն, ընդունելով կանխաւ շնորհա-
 կալեաց և յարգանաց հաւաստին:
 Անցեալ օր, զբօսանաց համար երբ
 կ'անցնէինք Հալէպ չարչըսը կոչուած
 փողոցէն, անգամ մը ուղեցինք ճա-
 շակել Հաճախի ճաշարանի կերակու-
 ռներն, զորս մեր բարեկամներէ շատեր
 այնքան կը գովէին:
 Եւ երբ ճաշարանէն ներս մտանք
 նախ և առաջ մեր աչքին զարկաւ
 տեղոյն մաքրութիւնն ու սպասար-

կութիւնը, որ ճամարիտը խօսելով կըր-
 նայ գերազանցել իր նմանները: Ար-
 դէն ամեն ոք գիտէ թէ ճաշարանի
 մը կամ ուրիշ ո՞ր և իցէ բանի մը ա-
 ռաջին պայմանն է մաքրութիւն, ու-
 ըռմ գոյախտաբար կարեւորութիւն
 չը տրուիր շատ մը ճաշարանապետաց
 կողմանէ:

Դալով կերակուրներու ընտրու-
 թեան և համեղութեան, աւելորդ է
 հոս գովեստներ ընել. միայն սա չա-
 փը կ'ըսենք, թէ այս ճաշարանը մըր-
 ցելու վիճակին մէջ է ուրիշ ճաշարան-
 ներու հետ և թէ գնահատելով զայս
 պարագայ, խուռն բազմութիւն մը
 կ'երթեւեկէ հոն:

Ուրեմն, կը շնորհաւորենք ճաշա-
 րանապետ Օննիկ Էֆէնտին, որ ա-
 նընդհատ աշխատութեամբ, յաջողած
 է իր ձեռնարկին մէջ և միանգամայն
 կը յանձնարարենք մեր յարգելի բա-
 րեկամաց անգամ մը հանդիպիլ Հա-
 ճախի ճաշարանը, որ Պարահանդես-
 ներու առթիւ բաց է մինչեւ առաւօտ
 և որ լաւ կերակուր կը մատակարարէ
 միշտ չափաւոր գներով:

21 Յունի. 1889

Տ. Բ.

Բերա

ԿՈՒԶԻԿԸ

Ա.

Օրը կը տարածամէր, հորիզոնը
 տակաւ կը մթննար տխուր ու նսեմ
 ստուերներու տակ, որք, սեւազգեստ
 ուրուականներու նման, կ'ընդգրկէին
 ամբողջ Կրկնակամարը: Օրը քաղցրիկ
 էր և հեշտանոյշ: Լուսնկայն, գիշե-
 րային այն բոցահեր թագուհին, իր
 դաշնկոտ ու նուաղուն լուսով կը պա-
 տէր զաշխարհ և խարտիշահեր կուսի
 մը հանգոյն, կը ժպտէր գոգցես կա-
 պուտակ երկնքին վրայ: Աստղը եւս
 առկայ լուսով կը շողային հոն, նը-
 ման փաղփուռ ոսկիներու, զորս հըս-
 կայ ձեռք մը կը թափէ մթազգած
 խցիկի մը մէջ:

Յանկարծ, զոյգ մը ծաղկահա-
 սակ նշանածներ երեւցան ծառերու
 խորհրդաւոր շուքի մը ներքեւ: Մին,
 չքնաղագեղ կոյս մըն էր, և միւսը
 սիրատարփ պատանի մը, որք, թեւ
 թեւի տուած, սիրտ սրտի կապած,

կը քաղէին անդորրիկ և կը խօսակցէին ժպտալից, ոյց աչաց մէջ սիրոյ բոց մը կը պլպլար և շրթանց վրայ տաքուկ բառեր կը թրթռային: Որպիսի բարեբաստութիւն:

Իր պատշգամբի պատուհանին կըրթնած, Գլօտ Շառլէն, հռչակաւոր վիրաբույժն, իր աչերով կը հետեւէր այդ երկու սիրակցարդ երիտասարդաց: Բայց, ի տեսիլ տոյն խորհրդաւոր էակաց, որք լուսնին արծաթափառ նշուլից տակ կը շրջէին ցնծալից, խոկուն ու մեղամաղճոտ կերպարան մ'առաւ, ջղային սարսուռ մ'անցաւ իր երակաց մէջէն և խորին ու դառն ծալքեր գծուեցան իր ճակտին վրայ: Իր ականողիք, որք զոյգ մը թաւ յօնքերու տակ կը փայլատակէին, գիշերային տարտամ խաւարին մէջ սուգեցան, անթարթափ, նուազկոտ, երազուն...: Ահ, ինչ երջանիկ են դոքա, կը խոկար, որքան բարեբախտ, զի բնութեան անոյշ լուսութեանը մէջ, սիրոյ հմայքը կը վայելեն: Եւ որքան չուառ կը համարէր ինքզինքն, զի, անդատին ի մանուկ տիոց, բնաւ խակ չէր ճանցած սիրոյ այն քաղցրիկ վայելքը: Բարեկամուհի մը բնաւ չէր արձկած անոյշ նայուածք մ'իր երեսին և երբէք չէր խօսակցած այսպէս քով քովի, հանդարտ քայլերով, ծառոց մոխրագոյն հովանոյն տակէն, ձեռքն իր ձեռքին մէջ և աչերն իր աչաց սեւեռուն, վասն զի հէք Շառլէն, բնութեան մէկ հրէշն էր միով բանիւ, կարճահասակ Կոն-Ջիկ մըն էր:

Իր կեանքն, ի սկզբան անպատում չարչարանք մը, և ապա գիշերաջան աշխատութեանց շարք մը եղած էր: Իր ծննդեան երկրին մէջ Գլօտ Շառլէն թշուառութեան զաւակը կոչուած էր, և իր ծնունդը մահ տուած էր հէք մօրկանը:

Սա՛ մին էր այն տգեղ, տխրած ու տոգոյն տղաքներէ, որք միշտ ենթակայ կը լինին ծաղրածութեանց ու անարգանաց: Բայց, հակառակ այնքան չարչարանքներու, որոնք իր բաժինն եղած էին անդատին ի խանձարոց, միշտ կ'աշխատէր ու կը աքնէր և կ'ապրէր մէնիկ ու անոքիկ: Այս անտանելի կացութիւնը բաւական տեւեց և որպիսի ցնծութիւն մը զգաց

իր կրծոց տակ, երբ իմացաւ, թէ իր մտից քննութիւններն աւարտած էին և թէ ինք ստացած էր յաղթական պսակն, աշակերտ ընդունուելով հասարակաց վարժարանի մը մէջ: Խեղճ Գլօտ, սրտի անհուն զեղմամբ կ'երազէր, թէ իր մէնութիւնն, որ ցայն վայր տխրութեան մէջ թաղած էր զինք, վերջ գտած էր այլ եւս: Հոն, ընկեր մը, բարեկամ մը, սրտակից մտերիմ մը պիտի ընտրէր, ու իր բոլոր ուրախութիւնն ու տրամուլթիւնն երկուքի բաժնելով, կրկին սրտերով կեանք մը պիտի վարէր: Այս խաբէպատիր երազն, այս անուշ պատրանքը, կապուտակ պղպշակ մ'եղաւ, որ իրականութեան զարնուելով, անէացաւ անմիջապէս: Իր ընկերները հարուստի զաւակներ, պնդակազմ և բարեձեւ ծաղրածուններ էին և ինք թըշուառ տղայ մը, գեղջուկ մը, կարճահասակ կուզիկ մը: Այդ չարածի էակները շատ կ'անարգէին ու կը չարչրկէին զինք և, լիրբ ու լպիրշ բառերով, կը ծաղրէին զայն: Գանինք' անգամ արդեօք, տարաբաղդ Շառլէն դառնապէս կը հեկեկար, իր անկողնոյն վրայ տարածուած, բերանը բարձին կը թնցուցած, ծածկելու համար իր արտասուաց շիթերն, որք խորակօսներ կը պեղէին վտիտ այտերուն վրայ: Ոհ, միայնութիւն, մանկական ցնորքի տիոց մէջ, որպիսի կենսապառաղէտ մըն է: Միայնութիւն այլոց երջանկութեան մէջ, միայնութիւն խումբ մը վայրագ ազգամեներու մէջ, որք կը խոշտանգեն զքեզ իրենց ծաղրածու անգութ ոգիով, սոսկալի է այս:

Արդարեւ ինչչա՛փ անոյշ է, կը մըտածէր իւրովի, ունենալ մայր մը, ինքզինք նորա բազկաց մէջ զգալ, սեղմել նորա փափկիկ ձեռները, դընել գլուխը նորա մայրենի լանջաց վերայ, բարութիւն կարգալ իր աչերուն ալուրը մէջ, լսել նորա թրթռուն ձայնը, որ «Գլօտ» կ'արտասանէ: Բայց, խաբուսիկ պատրանք մըն էր այս իրեն համար, մայրը հրեշտակներուն գրկաց մէջ կը հանգչէր և այդ Գլօտ բառը փոխուած էր հիմակ ԿոնՋիկ ԿոնՋիկ ԿոնՋիկ մականունան, զոր ծաղրալից հայհուջներով կ'արտասանէին իր ընկերներն ու փողոցին սրիկայ տղաքներն, ...:

Վերջապէս ինը տարիներու երկար ընթացքէ մը յետոյ, վարժարանի տանջանքները վերջ գտան, Գլօտ յայնժամ գրեթէ քսան տարեկան երիտասարդ մըն էր:

Քսան տարի, մանկութեան խօշարքութեանց եղանակն է, ուր մարդ խաբուսիկ յոյսերու և խուսափուկ պատրանաց մէջէն կը նշմարէ իրականութիւնը: Բայց այս քսան տարիները կարի պատճառական եղան իրեն համար և խոհից ու սիրոյ անգութ վայրկեաններու մէջ, մէկ քանի ցնորքներու և բանդագուշանաց չափ տեւեցին կարծես: Այսու հանգերձ, իր մանկական կենաց մէջ մերթ մերթ կ'ունենար այնպիսի վայրկեաններ, յորս, իր կիսախուփ կոպերուն տակէն, կ'ընդհարէր զնէ, իր գաղափարականը, գեղեցիկ, բանաստեղծական և, հրեշտակի մը հանգոյն, լուսանիւթ և երկնային...:

Այն ատեն, սրտի անճառ բերկրութեամբ առլցեալ, անձնատուր կը լինէր այդ վայրկեաններուն և նորէն կը խփէր իր թախծալից աչերն, մասնիկ մը չը կորսնցունելու համար իր երազներէն ու ցնորքներէն, մինչդեռ իր սիրտը՝ համակ էութեանը մէջ կը ծաւալէր սարսուռից յուզում մը, որ կ'ելեկտրացնէր իր զգացմանց թելերն և որ, իր արտեւանանց տակ, իր արտասուաց աամկութեանը մէջ կը շողացնէր հազարաւոր սոստղիկներ, փայլուն պաղպաղուն, իբրեւ հրացայտ աչկունք սիրամարգի...:

(Շարունակելի)

Թարգմանեց

ԳԵՈՐԳ Կ. ՍԻՄԻԵՇԵԱՆ

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԼՈՒՆ ԵՒ ԽՕՍՈՒՆ ՁՕՐՈՒԹԻՒՆՔ

Հարկ անհրաժեշտ է որ քիչ մ'ալ մէկդի դնենք կատակը և լրջութիւնն ձեռք առնունք, ցորչափ ճշմարտութիւն է թէ առ մեզ եւս լուրջ ուսմունք իրենց արժանաւոր յարգն ըսկսած են ստանալ: Յաւալի է սակայն որ Ազգ. Թերթերէն ո՛չ մէկը ի նկատի առնելով զայս՝ սկսած չէ քիչ մ'ալ գիտնական ճիւղը մշակել. միայն Բեւա՛յը կայ, որ երբեմն լուին զօրու-

թեանց վրայ կը խօսի, և այս կերպով յոյս կը ներշնչէ թէ առաջին քայլն առնելու վրայ է գիտնական աշխարհին մէջ:

Այդպէս թերթերու այս պակասը լեցնելու համար՝ կը խոստանանք մեր աղնիւ ընթերցողաց երբեմն երբեմն այս սխալներու մէջ գրել գիտնական նիւթոց վրայ ամենայն լրջութեամբ, որպէս վայել է:

Այս առաջին յօդուածնիս, որ գիտնական է, պիտի խօսի լռին զօրութեանց վրայ, խոստանալով խօսիլ խօսուն զօրութեանց վրայ, որոյ համար Բէ-շահն, կարծեմք դեռ դրած չէ:

Արդ՝ պէտք է գիտնաք, Տեառք Երեսփոխանք, թէ . . . բայց ես ինչ կ'ըսեմ. միթէ Երեսփոխանութեան պիտի խօսէի, քա՛ւ լիցի, այդ չէ իմ նպատակս: Երեսփոխանութիւն ըստած առարկայն կը խօսի միայն, լսելու սահմանուած չէ, և ինչ որ կը լսէ երեսփոխանական ժողովի մը մէջ՝ այն նստարաններն կրնան լինիլ, որ սահմանուած են ճարճատելու: Այո՛, սոխակը կ'երգէ, հաւը կը խօսի, ոչ խառը կը մայէ, կատուն կը մլաւէ. գորտը կը կրկնայ, նստարաններն կը ճարճատեն, և առիւծը կը մռնչէ. որպէս գրուած է «գիտելիք և պարտիք տղայոց» գրքոյի մէջ, զոր կը կարդան հայ մանկիկներ և կը խորդան հայ կոկորդիսներ:

Ուրեմն, Ազնիւ ընթերցողներ, պէտք է գիտնաք նախ որ՝ լռին զօրութիւններ կան տիեզերաց մէջ, ինչպէս մեր ներսիդին: Լռին զօրութիւն ըսելով՝ պէտք է իմանալ այն զօրութիւններն, որ անձայն են, բայց կը գործեն. օրինակի համար ստամոքսին մարսելու գործողութիւնը լռին զօրութիւն մ'է, և եթէ երբեմն կան ստամոքսներ. որ լռին կերպով չեն կատարեր մարսելու գործողութիւնն. այդ բացառութիւն է: Ընդհանուր օրինաց հարկ է ուշադիր լինել:

Նիակարայի ջրվէժը լռին զօրութիւն մը չէ, հրացանին արտագրած ճալթմունքն լռին զօրութիւն մը չէ. խորհրդով հայհոյելը սակայն լռին զօրութիւն մ'է, որոյ հակառիչն է բանիւ հայհոյել:

Այինչ կարող է քակել լայն սառ-

նային կապանքն, որ զհայերն միմեանց կը միացնէ: Բայց արեւուն մէկ ճառագայթը, որոյ համար բանաստեղծութեան մէջ կրնայ ըսուիլ՝ բազմաշողով և լուսացնող նշոյլք արփւոյն, կրնայ յուծել փետրուարի մէջ մեր տանց տանիքներէն կախուած սառոյցի հիւսքերն. և արեւուն այդ ճառագայթն ահա լռին զօրութիւն մ'է:

Հարաւին բռնաշունչ հողմն լռին զօրութիւն մը չէ, ինչպէս և խոտաշունչն հիւսիսի, որ կը փչեն հակառակ կողմերէ. միմեանց հակառակ կուսակցական ոգիներն մասամբ հարաւն եկած են և մասամբ՝ հիւսիսէն. ասոր համար է նաեւ որ ժողովներու մէջ կուսակցութեանց մին հիւսիսային կողմը կը նստի, և միւսը հարաւային կողմը:

Լռին զօրութեան օրինակներ շատ կրնանք տալ. բայց մէկ ամենազգալի օրինակաւ մը գոյցեմք այս գլուխը, խօսելու համար աւելի կարեւոր նիւթի մը վրայ որ թէև դարձեալ լռին զօրութեան արդիւնք է:

Բարեսէր անձնաւորութիւն մը երբ դպրոց մը կը չինէ, և համեստութեամբ իւր անունն կը ծածկէ, լռին զօրութիւն մը գործած կը լինի, բայց երբ ուրիշ մը զայն հիմնայաբար կործանելու քաջութիւնը կրնայ ունենալ, յայնժամ գործողը խօսուն զօրութիւն է, և թէ ինչո՞ւ. կարծեմ հարկ չկայ բացատրելու, որովհետեւ խուլ մը անգամ կրնայ երեւակայել թէ փշոզ դպրոց մը ո՞րքան ձայն կրնայ հանել. և երբ գործին մէջ ձայն կայ, ուրեմն գործողն է խօսուն զօրութիւնն:

Ըստ այսմ, աւսանողի մը երեսին վրայ ազգասիրաբար, այսինքն ձրի, տեղաւորուած ապտակ մը խօսուն զօրութիւն է, բայց այն հրաժարագիրն որում ուսուցիչ մը ժամէ ի ժամ կըրնայ ապասել, հիւանդութեան պատճառաւ դպրոցէն բացակայ գտնուելուն համար, լռին զօրութիւն մ'է և ներսէն կը գործէ. այսպէս են բոլոր դեղերն, զորս բժիշկները կը մատակարարեն հիւանդ չեղող մարդոց վրայ:

Հօլլուէյի դեղահատները լռին զօրութեան մարմնացումն են, սիրուն և տիրապետող նայուածք ինչ են: Եթէ ոչ անհուն լռին զօրութիւններ:

Լռին զօրութեան պատճառաւ դեղորայք:

Լռին զօրութեան վրայ խօսած ատեննիս՝ անպատեհ չէ անշուշտ և յանձնարարել հետեւեալ ընտրելագոյն դեղերն, որ լռին զօրութեանց տրամադրութեան համաձայն պատրաստուած են, և կուգան վարէն:

Լուիճի Ֆէռիքօ ասիտիքօ, որ պատրաստուած է նշանաւոր քիմիագէտ պարոն Փաթաթէօի քօէլդեղահատ մ'է կլոր խոշոր և պողպատեղան. թէպէտ ամեն կոկորդ չկրնար կլլել զայն. սակայն կլլելու պատիւն ունեցողներն կրնան անմիջապէս ազատիլ փորհալութենէ և թանջքէ. որովհետեւ վորըն այն պարագային ալ կը դադրի գործելէ. փորին փափաքածն է այս, որ ամեն եղանակի մէջ կրնայ պատահիլ:

Մէնթա լաուռա ագուա տի ֆէռիճինօֆէնթա իմատիաթաթէ: Այս դեղահատներն իրենց սնունտն չափ խոշոր չեն, բայց նշանաւոր ազդեցութիւն մը ունին, և կը գործեն լռին՝ ստամոքսի դրութեան վրայ, կաթուածի դէմ, աչքի ցաւի համար, ակուայի ցաւի դէմ, խլութեան դէմ, սրտի հիւանդութեանց համար, նասըրի դէմ, որ դժբաղդաբար նոյնչափ տարածուած է հիմա, հազի դէմ և կազի դէմ իբրեւ կառտ-ֆէօ կամ հրապահական:

Փուտուատիքօ ուզլիա միսկիքօ, ասիկայ փոշի է յատկապէս պատրաստուած տուփերու մէջ ֆարիզէն կուգայ, և հոս, եթէ գործածուի, կը գործէ մորթի վրայ. դուցէ ոմանք կարծեն թէ փրէ, թախտապիթի կամ ոջիլ է, բայց կը սխալին. այս փոշին իրաւ է թէ մորթի վրայ կը գործէ, սակայն կրնայ ըլլալ որ մորթէ ներս ալ անցնի: Զայն գործածող տիկնայք և օրիորդք պիտի ունենան ձիւնի պէս ճերմակ, բայց ոչ այնպէս ցուրտ ձեռքեր, այտեր, ականջներ. քիթեր, ճակատներ և վիզեր. այլ ոչ թէ իւրաքանչիւրը մէկէ աւելի. այդ ալ կարելի է. բայց դեռ ասոր համար պատրաստուած դեղին ծանուցումը չը հասաւ ձեռքերնիս:

Խօսքը մէջերնիս, փափագողներ կան անշուշտ քանի մը ձեռք, քանի մը քիթ, քանի մը այտ և այլն ունենալու, որովհետեւ բնական է որ շատ

գործածուած առարկայներն հիննան ,
և բնական է նաեւ մարդոյն հինը նո-
րելու իղձը :

Վերոյիշեալ դեղերն մեծ վստա-
հութեամբ կը յանձնարարեմք մեր բն-
թերցողաց . դեղեր , որոց օգուտն
ապացուցեալ է , դեղեր , որք միտալ-
ներ և բուիմներ ստացած են , դե-
ղեր , որոց օգուտակարութիւնն հաստա-
տող բաղմամբիւ նամակներ կը հասնին
առ մեզ ամեն օր , վերջապէս դեղեր ,
որոց համար կըսեն թէ դեղեր են , կը
բժշկեն շատ ցաւեր , ի մէջ ալ ոց՝ կեն-
դանութիւնը , որ մեծագոյն ցաւն է
մեզ նման մահկանացուաց :

Որպէս ըսինք , կը կրկնեմք ի վեր-
ջաբանիս՝ թէ այսպէս մերթ ընդ մերթ
գիտնական նիւթոց վրայ պիտի գը-
րեմք այս սխնակներուն մէջ , և պի-
տի ջանամք օգտակար հանգիստնալ
ազգայնոց , որք պապակեալ են գի-
տութեան ջրոյն , և անգիտաբար կը
գործածեն իսպիրթոյին ջուրը :

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԻ ՁԵՒՈՎ

ԳՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Փաբիգի մէջ անհուն ժառանգու-
թեան տէր պառաւ կին մը մերձ ի
մահ իր կրօնական պարտաւորութիւնը
կատարելու համար սպասուհին կը զըր-
կէ որ եկեղեցիէն իր խոստովանահայ-
րը բերէ : Սպասուհին եկեղեցի երթա-
լով թաղման հանգիսի մը պատճառաւ
քահանայն չը գտնելուն տուն կը դառ-
նայ :

Վարպետորդին մէկը հոն եկե-
ղեցւոյ բակը կեցած ըլլալուն պա-
սուհւոյն ձեռնունայն տուն դառնալը
տեսնելով առիթը փախցնել չուզեր և
անմիջապէս կնկան կը հետեւի որ
տունը սովորի , յաջողելէն վերջը ան-
միջապէս քահանայական վերադարձ մը
և գլխարկ մը ձեռք կը ձգէ և իբր
պանդուխտ քահանայ կը ներկայանայ
հիւանդ պառաւին , առարկելով թէ
քահանայը մեռելաթաղի գացած ըլ-
լալուն այս պաշտօնը առ ժամանակ-
եայ ինք պիտի կատարէ , մինչեւ որ
տաներէցը վերադառնայ :

Հիւանդը կորսնցունելու ժամանակ
չունենալուն փափաքանօք կընդունի

քահանայն և կուզէ որ խոստովանի :

— Տէր հայր , ատենս մօտեցաւ ,
նստէ՛ զիս խոստովանցուր :

— Գլխուս վրայ օրհնած , սանկ քիչ
մը ել տէ անկողնիդ մէջ նստէ . . . հա
նայիմ . դուն ալ աղջիկս քիչ մը դուրս
ել տէ քեզ չի կանչած մի գար :

Շատ աղէկ ըսելով սպասուհին կը
հեռանայ և հիւանդը դժուարաւ կել-
լէ անկողնոյն մէջ կը նստի :

— Մեղայ ամենասուրբ երրորդու-
թեան . . . հա՛ , շատո՞նց է որ անկող-
նի կը ծառայես խա՛թուն :

— Հրամմերես տէր հայր չորս տա-
րի :

— Աստուած բժշկութիւն պարգե-
ւեացէ :

— Ամէն :

— Էյ մեղքերդ ըսէ նայիմ . բա-
նիւ և գործով , գիտութեամբ և ան-
գիտութեամբ :

— Մեղայ Աստուծոյ :

— Աստուած թողութիւն չնորհես-
ցէ , հա՛ աղէկ միտքս ինկաւ , հիչ
դուն մարդ մարդասանք չունիս :

— Ունիմ տէր հայր , տղայ մը ու-
նիմ ան ալ ձգեց գործով դուրս գը-
նաց , ասանկ երեսի վրայ մնացի :

— Աստուած օգնական և պահա-
պան ըլլայ օրհնած . . . Մեղայ ամե-
նասուրբ երրորդութեան . . . էյ քեզ
ո՞վ կը նայի , ինչո՞վ կապրէիր մինչեւ
հիմակ :

— Ապրուստի կողմանէ նեղութիւն
չեմ քաշեր տէր հայր : Աստուծոյ տուա-
ծէն մէկ քանի տուններ խանութներ
ունիմ :

— Աստուած աւելցնէ . . . այլ և
մեղայ եօթնիցս յանցանօք , մահացու
մեղօք ագահութեամբ և մասամբնո-
րին . գողութեամբ և մասամբ նորին ,
ըսէ մեղայ Աստուծոյ :

— Մեղայ Աստուծոյ :

— Աստուած թողութիւն չնորհես-
ցէ . Փայիզն ալ փարա ունիս :

— Ունիմ տէր հայր , Աստուծոյ
տուածէն 3500 ոսկիի չափ ստակ ու-
նիմ . . .

— Ըսէ մեղայ Աստուծոյ . . . ի
հարկէ ասդին անդին , անտուկի մէջ
գոհարեղէններ ալ ունենալու ես ,
այնպէս չէ՛ . . .

— Ձեզի սուտ խօսիլ չըլլար տէր
հայր , Աստուծոյ տուածէն ամենական

բանը ունիմ :

— Աստուած անփորձ պահեսցէ ,
Աստուած եւս առաւել աճեցուցէ և
զձեզ զամենեսեանօդ ալ ի հիւանդու-
թենէ և ի խաբեբայից ազատ պա-
հեսցէ :

Վերջապէս այս խաբեբայ մարդը ,
քահանայական վերադարձին տակ . և
խոստովանանքի ձեւով պառաւ կնոջ
ունեցած ամբողջ ժառանգութիւնը
մի ըստ միովէ հասկընալով , տան մէջ
գտնուած ստակներն ու գոհարեղէն-
ները կը յափշտակէ և առանց խղճի
խայթի կը մեկնի պառաւին քովէն :

Այս իրողութիւնը , մեր ընթերցո-
ղաց ներկայացնելով , մեր նպատակը
ուրիշ բան չէ , եթէ ոչ զգուշացնել
մեր տան տիկիններն , որպէս զի այս
տեսակ խաբեբայներու թակարդին մէջ
իյնալով , վերոյիշեալ պառաւ կնոջ
բախտին չարժանանան :

ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՂՆԵՐ

Տէր պապան՝ որ շատ կը սիրէ իր
այն ծուխերը , որոնք բաղմամբաբ ըն-
տանիք մը կը կազմեն , պզտիկ կ'ա-
մուսնանան , ամէն տարի ժամանակին
կը ծնին և իրարու ետեւ յաջորդա-
բար կը մեռնին :

Ո՛հ , որքան աւելի սիրող պիտի
ըլլար մեր Տէր պապան , եթէ բարե-
բաղդաբար իրեն ծուխերը Եգիպտո-
սի ոչխարներուն պէս տարին երկու
անգամ ծնէին և շատ անգամ ալ երկ-
ւորեակ կամ քառորեակ :

* * *

Բժիշկը՝ որ շատ կը սիրէ իր այն
յաճախորդները , որոնք բաւական բա-
րեկեցիկ վիճակի տէր են , որոնք բը-
ժշկին և բժշկութեան յարգը ճանչնա-
լու աստիճան դատապարտուած են ,
որոնք ամուրի կեանքը չեն սիրեր հա-
կառակ բժիշկներու սկզբանց , որոնք
ամէն ծննդաբերութեան իրեն պէտք
կ'ունենան , որք հիւանդ կը ծնին և
շատ կապրին առանց մեռնելու :

Ո՛հ որքան սիրող պիտի ըլլար մեր
Բժիշկն եթէ մեր ազգն ալ Եւրոպա-
ցի ազգաց նման ամբողջովին լուսա-
ւորեալ ըլլար և քիթին վրայ ճանճ մը
նստած ատեն անգամ փոխանակ + Էջ Բ

ըսելու, ուղղակի մեր Բժիշկ պարոնին դիմեր :

* * *

Լրագրապետը՝ որ շատ կը սիրէ իր այն բաժանորդները, որոնք խանութիկ կը վճարեն, շատ մը աղքատիկ դժուարացներու մէկ մէկ օրինակ թերթ կը նուիրեն, և երբեմն կարեւոր խնդիրներ կը յարուցանեն՝ նիւթ և կոորիկ գումար մը մատակարարելով իր լրագրին :

Ո՛հ, որքան սիրող պիտի ըլլար մեր Լրագրապետը, եթէ իր ազգը ամբողջ ընթերցասէր ըլլար և իր բաժանորդաց թիւը գոնէ 400ը անցնէր :

* * *

Երիտասարդ Էֆէնտին՝ որ խենդի մը պէս կը սիրէ իր մանկամարդ կիսնը, որուն դեռ անցեալ տարի էր կէս յոբելանը կատարեցին, կը գուրգուրայ անոր վրայ կը դողայ դիմացը, կը նախանձի գետնի տախտակներուն անդամ թէ ինչո՞ւ բարեբաղդութիւն կունենան նորա Խօսուլէի Կոթոններուն պատուանդանն ըլլալու. մէկ խօսքով բարոյապէս ու նիւթապէս գերին եղած էր նորա :

Ո՛հ, որքան առաւել սիրող պիտի ըլլար մեր Էֆէնտին և բարեբաղդ, եթէ օրէնքն ներէր իրեն քանի մը հատ ունենալ այդ մանկամարդ կիներէն և կարգաւ ամէնուն համար ալ դո՛ւրսն ըլլար և կամ մեռներ :

Լինիմ և մեռանիմ բայերը թէեւ չեղոք են, բայց այս պարագային մէջ աղատ ես և իրաւունք ունիս զանոնք անցողական չինելու և այնպէս կարգալու :

* * *

Բարեպտուղ որդին որ շատ կը սիրէ իր հայրը, որ ոսկի կը դիզէ և կապրի մինչեւ որ ինք չափահաս ըլլայ և անկէ վերջը առանց աշխարհային ուրիշ մեղքեր գործելու Աստուծոյ արքայութեանը կ'արժանանայ ի մեծ վիշտ և ի խոր սուգ. համակելով և թաթախելով իւր միակ ժառանգորդ և բարեպտուղ որդին :

Ո՛հ, որքան երջանկագոյն պիտի համարէր մեր Բարեպտուղն իւր անձը եթէ վերոյիշեալ հօր նման մէկ քանի հայրեր ունենար :

* * *

Մեծատունը՝ որ շատ կը սիրէ իր այն բարեկամները, որոնք Աղքատ Ղա-

զարոսին ցեղէն չեն. տյօինքն առանց փոխարինութեան ստակ չեն մուրար. որոնք սովորած են աղայն ամէն ըսածին էֆէն Էֆէնտի պատասխանելու և նորա ամէն հաճոյից կատարման կազմ և պատրաստ մնալու :

Ո՛հ, որքան առաւել պիտի սիրէր մեր Մեծատունը, եթէ երբեմն չպատահէին ապերախտ մարդիկ, որոնք անխղճօրէն կելլեն և կը յանդգնին պնդելու հակառակ բարի և առաքինազարդ կամաց մեր ողորմածսիրտ Մեծատունին՝ թէ օրը 24 ժամ է :

* * *

Վարժապետը՝ որ շատ կը սիրէր իր ամէն աշակերտներն, որոնք կազանդին ամիս մը մնացած կարծես վրանին Հոգին Սուրբ կ'իջնէր և ամէնքը մէկէն խելօք և ժրջան կ'երեւային մեր Վարժապետին աչքին առ հասարակ և զրասեղանին վրայ փոխանակ Ծախայի և Կէնէնի պարկերն և օրացոյցը մէկմէկ կ'ողջագուրէին :

Բայց մեր Վարժապետն յօրէ անտի երբ կազանդի Կախէնի սովորութիւնը վերցաւ, իր սէրը աշակերտներուն տունէն վերցնելով՝ այն Հոգաբարձուներուն տունը կրեց, որոնք կը բարեհաճին և շնորհ կընեն մեր Վարժապետին ամսականը ժամանակին ողորմիլ . . .

Ո՛հ, որքան յանշափա պիտի սիրէր մեր վարժապետն եթէ գտնուէր բարեբաղդաբար իրեն համար սիրելի առարկայ մը :

ՊԻՏԱՆԻ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Բանաստեղծներուն և քերթողներուն գլխաւոր դրամագլուխն ի՞նչ է :

— Գոն հատ Ո՛հ. քառասուն հատ եի Աթլն. և ութսուն հատ կիծ . . .

* * *

— Ինչո՞ւ համար Պահոց օրերը կենդանիներու միս չենք ուտեր :

— Որովհետեւ այն օրերուն մէջ ուրիշ տեսակ աշխարհային զուարճութիւններն արգելուած ըլլալով մարդու միս ուտելու զբաղած ենք ընդհանրապէս :

* * *

— Ինչո՞ւ համար մարդ ուրիշին աչքին մէջի չիւղը կը տեսնայ. իսկ իր աչքին մէջի գերանը չի տեսնար :

— Որովհետեւ աչքն իր աչքին մէջ նայելու դիւրութիւն չունի :

* * *

— Աշխարհս ե՞րբ պիտի տեսնէ ընդհանուր խաղաղութեան երես :

— Երբ ամեն խնդիր թուաբանական հաշուով լուծուի :

* * *

— Ինչո՞ւ համար ցորեն կը ցանես և բամբակ չը բուսնիր :

— Այդ խնդրոյն պատասխանը անոնք կրնան տալ, որոնք դպրոցին մէջ ուղղական բան միայն կը սովորին և քաղաքագէտ դուրս կ'ելնեն :

(Նեղոս)



— Գաչա՞ ալաւն դահլիճին օգկաւսընը պիրատէր :

— Մալիւմ ա՛, օն ալթըտան աշաղա վերմէնօրլար :

— Շիւքիւրլէր օլսուն հէլէ շիմտիյէ դատար պիդ տօքուղա ալընօրլը :

— Մահիթա՛յ մը էտիյօսըն պէնի ախպար, էն ատի դահլիճի պիլէ վերմէնլէր :

— Եալան սէօյլէմէյէ պօրճումնէ, պիզիմ գօմլումուղըն աչճըսընտան հէր վագըթ տօքուղա ալընօրլմ :

— Հա՛ շէօյլէ եօլա կէլ, պէշէ պիլի վերսէ զարար էթմէզ. չիւնքի սէրմայէսինի չըգարմըլ պիւր քեարը դալմըլ տըր :

* * *

Պիր մաթպաա տէրունինտէ .

— Պաքսանա էֆէնտի, պանա լութֆէն իքի իւչ եիւզ թանէ կաղէթա քեաղըտը վերսէնիզ է, պիր գաչ կիւնտէն վերիիդ :

— Բէք էյի ամա տօսթում, իքի իւչ եիւզ թանէ քեաղըտը՝ նէրտէն պուլայլմ :

— Նա՛սըլնէրտէն պուլասըն, տէբօնըտա դըթլըդը՝ մը վար :

— Տէրօմըզը շիմտի քեաղըտը մաղաղասընա նազլ էթտիք, օրաեա միւրաճաթ իտինիզ :

Վ Ի Պ Ա Կ

Նախորդ թերթի շաբաթաթիւը սըխալմամբ 189 դուրած է, փոխանակ 188ի, զոր պարտք կը համարեմք ուղղել աստանօր :

ԱՎՐՈՐԱՆԸՆ ՀԵՐ ՆԵՎ
ԵՈՒՆԼՈՒ ԳՈՒՄԱՇԼԱՐԸ

ՄԱՐՏԻԿԳՐԻԳՈՐԵԱՆ

151 ՍԹԱՄՊՈԼ ԳԱԼԲԱԳՃԸԼԱՐ ՊԱՇԸ 151

Մէզքիւր տիւքքեանտա Ավրօրանրն սօն մօտալարնտան հէր նէվ սիհան վէ եռնուր գումաշլար, լահօրաքի, թիպէտ, քաշմէր- աիքօզ, վիկօն, օթօման, սէրփանթին, արնիլէր, շահագ, թըրիքօ հէր ճինս ալա գըշլըք ֆանէլալա, շալ բէնիլի գաստօր- լար, իփէքլի շալ ֆանէլալար, սօն մօտա ֆիտանըգլար, կարնիլի վէ կարնիլի տիւք գումաշլար, կարնիլիք գատիֆէլէր, հար վէ պօնճա շալլար վէ սաիրէ կէրէք թօփ վէ կէրէք արշըն իլէ սաթըլմադտա օլուգ, թէշրիֆէ յազպէթ պուհուրան զէվաթը քի- րամ հէմ էմթիանըն նէֆասէթ ու զա- րաֆէթինտէն վէ հէմաէ ֆիեաթլարըն է- շէնիլէթինտէն ֆէվէլալա մէմնուն օ- տաճաղլարը իլան օլունուր :

Սպըք Մամուլն սահիպ իմթիեազը Սյվազեան էֆէնտի, Գալաթտա, Բէնիշէնպիշ-Պաղարընտա, Իբսի խա-

նընտա պիր մաղաղա քիւշառիլէ նէֆիս զէշթին եալը, վէ լէզիզ շարապ վէ մաա- տիգա վէ էն ալէա ճինսիւնտէն տէ սապուն վ- քէզալիք էնվալի նէֆիտ գօնեաքար վէ հաթթա ծօ ծ Սալամօն գօնեաղը տալի կէ- թիլիթ մէքտէ պուլունտուղունտան մէմնուն օլմաղլըղը արղու իտէն զաթլարըն թէշրիֆ- լէրի իսթար վէ տալէթ օլունուր :

Պօղչա առտաընըն պիր սէնէլիքտէն եի- կիր ի սէնէլիկէ գատար էսկի շարապլար- իլէ Գըպըրըն տալի գումանտարիա թէս- միլէ օլունան շարապլար պուլունտուղուն- տան, լիւղունու պալունան զաթլարըն մա- իւմէր օլմաղ ինզըէ, իլան օլունուր :

ՔՕՔ ՔԵՕՄԻՐԻԻ ՏԵՓՕՍՈՒ

Մէզքիւր տէշօնուն սահիպի, Յօվէլ Կ- Կարինեան, պաւ տէֆա իտարէլի վէ օճազ իչուն դաեթթ տաեանըգլը քօք քէօմիւրիւ կէթիլիթ միշ օլուպ, Յրնտ պըտա, Բէրէս թէճի սօգաղընտա, 14 նումէրօլու տիւք- քեանտա, զաեթթ էնվ ն ֆիեաթլա ֆի- րո խթ իթմէքտէ օլտուղըն, վէ արղու ի- տէնըլէր իչուն ալէա ճինստէն մանկալ քէօ- միւրիւ տալի պուլունտուղընը րաղպիլ թի- էնալիեէ խա սէթէն իլան ու պէյան իտէր :

ՏՊԱԳՐՈՒԹԻԻՆ

Ն Շ Ա Ն Պ Է Ր Պ Է Ռ Ե Ա Ն

ՃԱՆՖԵՍՃԻ ԱՒԵՏԻՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

ՍԹԱՆՊՈԼՏԱ ՉԱՐՇՈՒԻ ՔԷՊԻՐՏԷ ՍԱՆՏԱԼ ՊԵՏԵՍԹԷՆ ՍՕԳՍԱԸ ՆՕ. 7

Իչպու մաղաղատա սիեան վէ բէնիլի ֆիսթանըգ, ճէհէլ իչին իբէքլի դու- մալլարըն էն էլի վէ կիւզէլ ճինսլէրի, կրօն ֆալլ ֆրանտէ, արմիւր մէրվէյ- եօզ, սաթէն, լիօն, բէնիլի աթլազ, մանթօլուգ չիշէքլի գատիֆէ, կարնիլիք չըպուզլու գատիֆէ, դալէլի ֆիսթանըգ, վէ իբէքլի կընտաին գատիֆէլի պու- լունտուղունտան, միւրաճաաթ իտէճէք քեաֆֆէյի րաղպիլ թիւ միւշէրիլէր/ն կէրէք էմթիանըն նէֆֆասէթ վէ զարաֆէթի, վէ կէրէք ֆիեաթլարըն էնվէնի- եթթինճէ խօշնուտ օլաճաղլարը պէեան օլունուր :

ՍԹԱՆՊՈԼ ԵՆՆԻ ՃԱՄԻՏԷ
ՍԲԷՉԱՐ ՏԻԻՔԵԱՆԼԱՐԸ

ՏԵՊՊՕ

ՍԹԱՆՊՈԼ ԵՆՆԻ ՃԱՄԻՏԷ

ՍԲԷՉԱՐ ՏԻԻՔԵԱՆԼԱՐԸ

ՍԹԱՄՊՈԼ ՔԷՕՐԻԼ ԳԱՐՉԸՐՆՏԱ — 77

ՊԷՅՕՂԼՈՒՆՏԱ ՏՕՂՐՈՒ ԵՕԼՏԱ — 168

Մէզքիւր էնզալաանէ վէ սրէշար տիւքքեանլարընտա միւթէաաւիտ վէ էնվալի թէրքիլաթը քիւշեվիլէ վէ էնզա վէ մաալէճաթ վէ ալէա- թը ճէրրահիլէ, վէ լէա ճինս լաթիք իլէ չէլիքալէ մաամուլ ալաթ ու էտէվաթ, վէ Լիսիլի ուսուլիլտէ պաղար, վէ Յրանսըգ վէ ինիլի- իլիք էնզալարը, սօլֆաթօնուն էն ալէա ճինսի, ելըլի վէ էնէնպի մա- տէն սուլարը, ֆօթմ'ըաֆճըլար իչին թէրքիլաթը քիւշեվիլէ, Պրտօ շարապլարը, գօնեաքլար, էնվաթ իչիլիլէր, գօգուլու սապունլար, նէ- ֆիս բուտրա, օ տր Գօշնեք, սաչ սուլարը, տիւզիլիլիքլէր, վէ ըս- բէշարլար իլէ քիմեալաանէլէրէ մախուս ճամ գապլար վէ ալաթ ու է- տէվաթ միւթնուտ օլուպ, թօքտան վէ բէրաքէնտէ ֆիլուլիթ օլունուր :

Քէզալիք մէզքիւր տիւքքեանլարտա մունայէնէի թըպիլիլէ տալի իճրա օլունուլ, պունս մախուս օտալար վար տր կէճէլէր աշըգ աըր Ձէյլ — Պիլիլիլէ էնզա վէ էմթաամըղըն էն ալ'ս ճինստէն օլտու- ղունու վէ բէք էնվէն ֆիլաթլա սաթըլարընը Տօգթօր էֆէնտիլէրէ վէ րաղպիլ թիւ էնալիլէ իլան ու պէյան իտէրիլ :

ԻԼԱՆ



Գալաթտա Թիւնէլի վէ Շթայն մաղաղալարը- նըն եանընտաքի Մէրթա պանի սօգաղընտա քեա- եին 17 նօմէրօլու մաղա- ղանըն սահիպի «Անտօն Տէրվիշ» էֆէնտի, պու- տէֆա երլ պաշը օլմադ- միւնասիպէթիլէ Բարիզ վէ Լօնտրանըն միւթէպէր ֆապրիբալարընըն էն նէ- ֆիս վէ էն թաղէ մալլէ- րինի ճէլպ վէ թէտարիք իթմիշ օլտուղունտան, կէրէք թօքտան վէ կէրէք

բարչա բարչա սապուն վէ լէվանթա վէ էմսալի սաթըն ալմադ արղունընտա պուլընան զէվաթ իլէ միւշթէրիլէրի- նին քէմաֆիսսապըգ թէշրիֆէ րաղ- պէթ պուհուրմալարընըն բէճա վէ քէն- տիլէրինի հէր վէճէլէ մէմնուն իթմէք զալըթթինտէ պուլունաճաղընը արղ ու իլան իտէր :

ԱՆՏՕՆ ՏԵՐՎԻՇ